



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ



## **ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց**

**ԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
2-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՄԱՆ**

## **Հասցեամասի լրացումը**

ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ ԳՀՀ) գյուղական և քաղաքային համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման **2-ԳՀՀ հարցաթերթը** լրացվում է համայնքների ղեկավարների կողմից: Հարցաթերթի լրացումը սկսվում է հասցեամասի լրացումից:

### **ԲԱԺԻՆ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Լրացվում է **շրջանի, համայնքի** անվանումը, ինչպես նաև տվյալ համայնքի ղեկավարի անուն, ազգանունը:

«Շրջան» և «Համայնք» տողերին համապատասխան վանդակները չեն լրացվում համայնքի ղեկավարի կողմից, քանզի դրանք նախատեսված են հարցաթերթի հետագա մշակման համար, որը կատարվում է տվյալների ամփոփման փուլում՝ ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից:

**Ուշադրություն՝** հարցաթերթի լրացման ժամանակ հարցաթերթում բերված բոլոր հարցերը՝ իրենց հնարավոր պատասխանների բոլոր տարբերակներով, ենթադրում են պատասխան: Այն աղյուսակներում, որոնց տողերում պետք է լրացվեն թվային ցուցանիշներ, վերջիններիս առկայության դեպքում գրվում է համապատասխան թիվը, իսկ բացակայության դեպքում անպայման գրվում է «0», իսկ մնացած հարցերում հնարավոր պատասխանի դեպքում պահանջվում է կատարել համապատասխան (X) նշումը:

## ԲԱԺԻՆ II. ՀՈՂԵՐ

**Հարց 4.** Գյուղատնտեսական նշանակության, տնամերձ և այլ հողերի տարածություններն ըստ սեփականության սուբյեկտների և տիրապետման տեսակների,

առ 01.07.2020թ.

(ըստ համայնքի հողային հաշվեկշռի տվյալների)

Աղյուսակ 1-ում ըստ համապատասխան սյունակների լրացվում է ԱՀ քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վերաբերյալ տվյալները՝ համաձայն աղյուսակում բերված տողերի (**վարելահող, բազմամյա տնկարկներ, այդ թվում՝ պտղատու այգի, խաղողի այգի և այլ բազմամյա, խոտհարք, արոտ, տնամերձ հողեր, այլ հողատեսքեր**):

**Ըստ առանձին գյուղատնտեսական հողատեսքերի գործառնական նշանակության՝**

**«վարելահողը»** գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի տակ կանոնավոր (սիստեմատիկ) մշակվող և օգտագործվող հողատեսքն է՝ ներառյալ բազմամյա կերային մշակաբույսերի (խոտաբույսերի) ցանքերը և ցելերը,

**«բազմամյա տնկարկներ՝** պտղատու այգի և հատապտղանոց ու խաղողի այգի».

**պտղատու այգին և հատապտղանոցը** պտղատու այգիների և հատապտղանոցների փակ գտնվող հողատեսքն է՝ անկախ

նրանից՝ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքապու հասակում, և հիմնվել են պտուղ և հատապտուղ ստանալու համար,

**խաղողի այգին** խաղողանոցների տակ գտնվող հողատեսքն է՝ անկախ նրանից՝ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքապու հասակում, և հիմնվել են խաղող ստանալու համար տարածությունները,

«**խոտհարքը**» կանոնավոր (սիստեմատիկ) խոտհնձի համար օգտագործվող գյուղատնտեսական հողատեսքն է,

«**արոտավայրը**» գյուղատնտեսական կենդանիների կանոնավոր (սիստեմատիկ) արածեցման համար պիտանի և խոտհարքի տակ չօգտագործվող բնական կամ ցանովի խոտերի տակ գտնվող հողատեսքն է,

«**այլ հողատեսքը**» գյուղատնտեսական նպատակների համար նախատեսված, սակայն դեռևս գյուղատնտեսության արտադրության մեջ չօգտագործվող այլ հողերն են՝ աղուտներ, ավազուտներ, ձորեր, ձորակներ, քարքարոտ տարածություններ, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհներ և այլն:

**Տնամերձ հողը**» տնտեսությանը (ընտանիքին) բնակավայրի վարչական տարածքում բնակության համար սեփականության իրավունքով կամ օգտագործման այլ ձևերով (անհատույց) հատկացված հողն է:

**Ուշադրություն՝ աղյուսակ 1-ի «Այլ հողատեսքեր» /կող 10/ տողում ըստ համապատասխան սյունակների լրացվում են միայն համայնքի հողային հաշվեկշռի «գյուղատնտեսական նշանակության հողեր» բաժնի այլ հողատեսքերին վերաբերող տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:**

**«Հողեր, ընդամենը (08+09+10)» /կող 11/ տողում լրացվում են աղյուսակի 1-ի համապատասխան սյունակներն ըստ պահանջվող տեղեկատվության:**

**ԲԱԺԻՆ III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ,  
ՍԱԿԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔԱՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԸ**

առ 01.01.2020թ.

Աղյուսակ 2-ում լրացվում են տվյալ համայնքում հաշվառված, սակայն համայնքից բացակայող տնտեսությունների քանակի և դրանց պատկանող հողերի վերաբերյալ հանրագումարային տվյալները՝ ըստ 1-ին տողի, իսկ 2-րդ տողով դրանցից առանձնացվում են այն տնտեսությունների քանակը և դրանց պատկանող հողերի վերաբերյալ հանրագումարային տվյալները, որոնք մշակվում են:

**ԲԱԺԻՆ IV. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍԱԿԱՅՆ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԵՐ ՈՒՆԵՑՈՂ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ  
ՀՈՂԵՐԸ**

առ 01.01.2020թ.

Աղյուսակ 3-ում լրացվում են տվյալ համայնքի բնակիչ չհանդիսացող, սակայն համայնքում սեփական հողեր ունեցող տնտեսությունների քանակի և դրանց պատկանող հողերի վերաբերյալ հանրագումարային տվյալները ըստ 1-ին տողի, իսկ 2-րդ տողով դրանցից առանձնացվում են այն տնտեսությունների քանակը և դրանց պատկանող հողերի վերաբերյալ հանրագումարային տվյալները, որոնք մշակվում են:

**ԲԱԺԻՆ V. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ, ԱՆԿԱԽ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՑ,  
ԱՌԿԱ ԵՆ**

Այս բաժնի 9-14 հարցերի լրացման ժամանակ անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» կամ «Ոչ» տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել նշում (X):

**«Գյուղական և քաղաքային համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ հարցաթերթը»** լրացնելուց հետո, համայնքի ղեկավարը մեկ անգամ ևս ստուգում է հարցաթերթում լրացված բոլոր տվյալները,

համեմատում դրանք հողային հաշվեկշռի տվյալների հետ, այնուհետև ստորագրում այն, գրում լրացման ամիս, ամսաթիվը և հանձնում ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի շրջանային բաժնի պետին:

## Ե 2 ու մ ն ե թ

A series of horizontal dashed lines for writing practice, arranged in 20 rows.